«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում (ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31) 09.07.2025թ.-ից յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 12:00-ից, իրականացվելու է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հետևյալ լոտերի աճուրդային վաճառքը՝ «դասական» (գնի բարձրացմամբ) եղանակով.

Լոտ 1. Սև մետաղի ջարդոն՝ 840կգ (գտնվելու վայրը՝ «Արարատ-2» ենթ., Հարավային տեղամաս): Լոտի մեկնարկային գինը՝ 25200 ՀՀ դրամ:

Լոտ 2. Ալյումինե հսկող մալուխի ջարդոն՝ 1442կգ (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1): Լոտի մեկնարկային գինը՝ 1081500 ՀՀ դրամ :

Լոտ 3. Պղնձե հսկող մալուխի ջարդոն՝ 377կգ (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Զ. Անդրանիկի 1): Լոտի մեկնարկային գինը՝ 1074450 ՀՀ դրամ:

Լոտ 4. Ծածկի պանել /քայքայված/՝ 5 հատ (գտնվելու վայրը՝ «Արարատ-2» ենթ., Հարավային տեղամաս): Լոտի մեկնարկային գինը՝ 20000 ՀՀ դրամ:

Լոտ 5. Քար տուֆ /քայքայված/՝ 258 հատ (գտնվելու վայրը՝ «Արարատ-2» ենթ., Հարավային տեղամաս): Լոտի մեկնարկային գինը՝ 33540 ՀՀ դրամ:

Լոտ 6. Փայտ ապամոնտաժված՝1.3 մ^3 (գտնվելու վայրը՝ «Զովունի» ենթ., Հարավային տեղամաս): Լոտի մեկնարկային գինը՝ 7800 ՀՀ դրամ:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան լոտի ընթացիկ մեկնարկային գնի 10%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվա ժամը 11:00-ն: Նախավճարը վճարվում է «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570004985660100 հաշվեհամարին) կամ բորսայի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ և բորսայի կողմից տրված մասնակցի վկայական, որը հաստատելու է նաև նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ և մասնակցի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, կամ սահմանված ժամկետում չի կարարում վճարումները, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Լոտի տեղափոխումն ապահովելու է գնորդը:

Բորսայի միջնորդավճարը, գույքի տեղափոխման և գործարքի իրականացման հետ կապված այլ ծախսերը ներառված չեն մեկնարկային գների մեջ:

Լոտերին ծանոթանալու համար զանգահարել բորսա՝ ստորև նշված հեռախոսահամարով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ և անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով բորսային՝ ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը: